

և տարածեն ժողովրդի մէջ, ապա ինչ փողեր կ'մնայ նրանց որդիներին թղթախաղի և անառակութեան համար:

ԳԱՐ. ԵՆԳԻՐԱՐԵԱՆ.

Յովհաննէս Դուրբախեան. Ճանօթ պատկերներ. Ս. Պետերբուրգ 1903 թ. գինը 75 կոպ.

Այս գրքի հեղինակը մեր գրականութեան պատահական հիւրերից է. բայց չի կարելի ասել, որ նա բոլորովին օտար լինէր այդ ասպարիզի վերայ: Նա ունի մեր պարբերական հրատարակութիւններում մի քանի յօդուածներ, բանասիրականներ և թարգմանութիւններ: Ըստ երևոյթին Յ. Դուրբախեանը գերադասում է ֆելիէտոնական ժանրը և ընդունակ է հումորով գրելու: Բայց որովհետև հումորով գրելը դժուարին արուեստ է, իսկ Դուրբախեանը փոքրիկ տաղանդի տէր գրող է,—ուստի և նրա հումորը դժուարամարս է, արհեստական: Հումորիստն էլ երգիծաբան է, այսինքն իրան նպատակ է դրնում ծաղրի միջոցով ուղղել մարդուն, բայց նա չպէտք է ասպառակէ, չպէտք է բարկացկոտ և կծու լինի. նա պէտք է ծաղրէ բարեացտկամաբար (եթէ կարելի է այդպէս ասել), նա աւելի սրախօս է լինելու քան հեգնող: Ռուս վիպասան Շչեգրինը կամ Ռ. Պատկանեանը իր մի շարք բանաստեղծութեանց մէջ—բուն երգիծաբան է՝ հեգնող ու մտրակող. Գոգոլը, Պարոնեանը, Գաւսիմը, Ռ. Պատկանեանը իր Նախիջևանի բարբառով գրած պատկերների մէջ—հումորիստ են: Շրջանակը որոշել անկարելի է, բայց հեղինակը ինքը պէտք է գիտենայ չափը: Բայց Ա. Դուրբախեանը այդ չափը չգիտէ. մի բանասիրականում նա կարծես ասպառակող է, միևնույն—սրախօս պատմիչ: Մանօթ պատկերները բուման էլ նոյնպէս՝ չես իմանում, թէ հեղինակը լուրջ է խօսում, թէ ծաղրում է: Այդ է պատճառը, որ գիրքն էլ տարօրինակ տպաւորութիւն է թողնում՝ մի քանի գլուխներ շատ լաւ են գրուած, մի քանի տիպեր (ինչպէս՝ Տէր Խաչատուրը, Բադալը և այլն) լաւ են գուրս բերուած և կենդանի գծած, տեղ տեղ շատ սուր դիտողութիւններ են երևում և ճշգրտիւ, իրական պատկերներ են նկարագրուած—բայց ընդհանուր առմամբ ամբողջութիւն չի ներկայացնում շարադրութիւնը: Գրքի անունը Մանօթ պատկերներն է և դա համապատասխան

նում է բովանդակութեանը, որովհետև մեր առաջ անցնում են գաւառական քաղաքի ծանօթ տիպերը, խմբուած եկեղեցու-իրբն կենտրոնի շուրջը: Ուր են կատարուում դէպքերը—յայտ-նի չէ, գուցէ և Նոր Նախիջևանում, որովհետև մեզ մօտ էլ կան Դուրբախեանի դուրս բերած տիպերը, բայց մեզ մօտ-դրանք հին ժամանակի բեկորներ են, ուստի եթէ մեր քաղաքի կեանքն է դուրս բերուած, պէտք է ասել, որ տիպերը և դէպ-քերը «հին սերնդի» պատկերն ու կեանքն են տալիս և ոչ թէ նոր: Յամենայն դէպս հեղինակը իւր նիւթը վերցրել է կեան-քից և ո՛վ գիտէ քանի քանի գիւղերում և քաղաքներում այժմս էլ գոյութիւն ունին երեցփոխ Բադալներ, տիրացու Սիմօններ, Տէր Խաչատուրներ ու Մարկոս Աղաներ: Դրանք տեղական ոյժ-են, պահպանողական ոյժ, որը նոյն չափ ազէտ, որչափ և եսասէր ու փառամոլ: Դրանք «զաֆթ» են անում ասպարէ-զը ու չինական պարիսպներով շրջապատելով այն, անասելի ընդիմադրութիւն են ցոյց են տալիս ամեն մի նոր խօսքի, նոր հոսանքի, կենդանի գործի, լուսատու զաղափարի: Սերունդ է գալիս, սերունդ է գնում,—բայց Տէր Խաչատուրները մնում են կանգուն շնորհիւ իրանց ձեռք բերած գիրքին —ժողովրդի-տգիտութեան ու այդպիսի կարիքիստ մարդկանց նպաս-տող պայմանների: Երիտասարդ սերունդը կուռում է նը-րանց հետ, ծաղրում է նրանց, ապտակում է նրանց արարքը—բայց տապալել հին կուռքերը նրան չի յա-ջողւում: Բաղմազլխանի ցեցեր են դրանք՝ «Բաղաքում գտնուած բոլոր հասարակական հաստատութիւնների մէջ Տէր Խաչատուրը կամ նախագահ է, կամ հոգաբարձու և կամ պատուաւոր անդամ, իսկ հոգևոր կառավարու-թեան վրայ նա նայում է՝ ինչպէս իր սեփական դուքանի վը-րայ: Կոնսիստորի քարտուղարը, առաջնորդը, սինոդի անդամ-ները նրան յարգելով—յարգում, սիրելով սիրում են. նրանց յարգանքների ու սիրու գաղտնիքը Տէր Խաչատուրը մէնակ ինքն է իմանում. թիկ տւած այդ չինական պարսպին՝ տաս-նեակ տարիների ընթացքում նա ամբողջ Գ. քաղաքը սուսիկ-փուսիկ իր չնչին շեւ-ին է ծառայեցնում: Անշուշտ Մար-կոս աղայի աջակցութեամբ՝ «Մարկոս աղան Տէր Խաչատուրի-շատ մօտիկ բարեկամն է. նա չարչիութիւնից է սկսել իր գոր-ծը, վախառութեամբ էլ, կարծեմ, ուզում է վերջացնել. ստոր կեղտոտ և գող արարած է Մարկոս աղան, բայց Տէր Խաչա-

տուրի կամքը սրբագործել է (?) ժողովրդի աչքում:

Անկեղծ եմ ասում ձեզ—սրանք են մեր տունը քանդող-ները. որքան շուտ կարողանանք թուլացնել ղրանց ոյժը և ազդեցութիւնը, այնքան շուտ կլինի մեր յառաջադիմութիւնը: Դրանց դեմ կռուելու միջոցներից մէկն էլ այն ծաղրը ու հեգնութիւնն է, որ գործածում է «Մանօթ սլատկերների» հեղինակը:

Կռուքերը տեղից շարժուել են, բայց դեռ չեն տապալուել: Նրիտասարդ սերնդին, նրա ամենալաւ ներկայացուցիչներին, դեռ շատ բան կայ անելու թէ գրչով և թէ գործով:

ՄԻՆ. ԲԵՐԱՍՐԵԱՆ